ՎԵՐԱՇՆՈՒՆԴ

ՔԱՂԱՔԱԿԱՆ - ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ

ԱՐՏՕՆԱՏԵՐ ԽՄԲԱԳԻՐ Հ. ԳԱՐԱԳԱՇ

ԵՐԵՒԱՆ ՀՈՒՆԻՍ 1946 ԹԻՒ 120 – 1520

4

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ «ՎԵՐԱՇՆՈՒՆԴԻ»

Թերթս 1 գաւառ տարիք 40 ր. Արտասահման տարիք 60 ր.

Հասցէ Թիւրքանը Ղասանի, Քուչէ Մարջան (Իտալական եկեղեցու դիմաց)

Թիւ 22

شیرازه نوید

جریده سیاسی حایک کارلکاش تلفن ۷۲۲۹

تلفن چاپخانه آقای کریم برجان شماره ۲۲

شماره ۱۲۰ ۱۳۲۵—۳—۱۴

VERATZNOUND

Directeur-Propriétaire H.KARAKACHE

17-րդ տարի

Հեռախօս 7229

Գինը 2 ռիալ

ՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ»—ԻՑ

ՄԻ ՏԵՐԱԿԱՆ ԵՒ ՈՄԱՌՐ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Թարգմ. Գ. Խ.

Խաղաղութիւնը յաղթանակեց, շատ մօտիկ անցեալում անցեալ տարի միայն... Հազիւ մի տարի է անցնում, որ հեռատեսական Կարմիր Բանակը, Բեռլինի գրաւման համար, ուժեղ ճակատամարտներ էր ունենում և ի վերջոյ Մայիսի սկզբներում փայլուն յաղթանակով Սովետական զօրքերը գերուեցին Ֆաշիստների այդ օրջը։ Ֆաշիստական Գերմանիան՝ սատկուած, առանց պայմանի անձնատուր եղաւ հակահիտլերական միացեալ ուժերի առջև և մի քանի ամիս յետոյ, իր հերթին, ճապոնական կայսրութիւնը ևս ծունկի եկաւ։

Սովետական ժողովուրդը, խորապէս գիտակցում է, որ իր ուժերը և զինուորական ազնուականութիւնը ճակատագրական նշանակութիւն ունեցան, երկրորդ համաշխարհային պատերազմի յաղթանակի ապահովման և յաջողական հիտլերական Գերմանիայի ջախջախման հարցում, որը ոգեւորեցին և ազգերի կեանքի ամենամառնշաւոր թշնամին էր։ Իր հերոսական պայքարով ՍՍՌՄ—ի ժողովուրդը, փրկեց ֆաշիստական աւազակներից եւրոպական քաղաքակրթութիւնը։ Այսուհետ է կայանում, ինչպէս Ստալինն է ասել, Սովետական ժողովրդի մեծ արժանիքը՝ մարդկութեան պատմութեան առջև։

Ազատ ազգերի տարած յաղթանակը, ֆաշիստ բռնակալների դէմ, շատ խնդիրներ է պարզել՝ Եւրոպայի քաղաքական մթնոլորտում։ Այդ յաղթանակի հետևանքով, ազատագրուած երկրներում, ծնունդ են առել զօրաւոր ձգտումներ դէպի ժողովրդավարական իրաւակարգը, որոնք լենինեան ուղղութեան բանւորական շարժումները և հնարաւորութիւն է ստեղծել ժողովական պայքար մղելու լեռադիական հին ժողովների և ֆաշիզմի դէմ։

Սակայն ազգերը, ազատագրելով գերման ճնշիչ լուծից, մաքրել են իրենց ու

ֆաշիստական ցեղերից։ Նրանք բարձր են բռնել, ժողովրդավարութեան և լեռադիմութեան դրօշը։ Նոյնիսկ, եւրոպական այն երկրները, որ գերմանացիների կողքին կանգնած կուել են, արդէն քայլում են ժողովրդավարական ուղիով։

Սակայն, այդ բոլորից յետոյ, ամենքի համար պարզ է, որ ֆաշիստական ուժերը զեռևս մթնոլորտային չեն ոչնչացել։ «Ֆաշիզմի և Նացիզմի վերջին հետքերի ոչնչացման մասին, լուսակ կերպով՝ նախատեսել է 1918 թւի փետրուարին, Ղրիմի Խորհրդաժողովում, երբ մեծ ուժերի գեկավարների կողմից, բոլոր այդ խնդրի կիրառումը, մինչև այսօր, զանազան պատճառներով չի իրականացել։ Նոյնիսկ Գերմանիայում, ֆաշիզմի ոչնչացման գործը կանգ է առել կէս ճանապարհին, բացառութեամբ Սովետական գրաւած գօտիում, Իտալիայում, Մուսոլինիի հետևորդները, հնարաւորութիւն ունեն վերակազմելու դեռ չջարդուած ֆաշիստական օրգանները, Յունաստանում, մենարխիստ ֆաշիստները, ամենայն ազատութեամբ, զէնք են գործածում ժողովրդավարական հոսանքներին ճնշելու համար, Սպանիայում, ֆաշիզմը ամենայն մերկութեամբ իշխում է, որովհետև այդ երկիրը շարունակում է կառավարել Ֆրանկոն՝ նոգելի ծնունդը Հիտլերի և Մուսոլինիի։ Անշուշտ դեռևս Եւրոպայից դուրս, ցիր չեն ֆաշիստների թիւը։

Պարզ է, որ ֆաշիստական ուժերը, արդէն ոչնչացած պիտի լինէին ամեն տեղ, եթէ նրանց չհովանաւորէին, մեծ երկրների լեռադիական կապիտալիստները։ Ամբողջ աշխարհում, գեմոկրատիայի և լեռադիմութեան դէմ, քաղաքական պայքար է տարուում ֆաշիստ ուժերի՝ լինելու կամ չլինելու խնդրի շուրջ և այդ պայքարը յոյս չկայ, որ շուտ վերջանայ։

Այս պայքարը, որը չափազանց յատկանշական է ներկայ ժամանակաշրջանում, արժէքաւորման նիժարի վրայ է դնում շատ աւելի կարեւոր մի գոյավիճակ, քան սոցիալական ֆաշիստների ճակատագիրն է։ Ամենից առաջ, խնդիրը վերաբերում է՝ ընդհանուր խաղաղութեան և ազգերի ապահովութեան պաշտպանութեանը։

Ֆաշիզմը, իրքին պատերազմ է և իրաքանչիւր ֆաշիստ ամենամիւ շաղախն է պատերազմի։ Նա պատրաստ է ծառայելու այդ նպատակին և իր համար տարբերութիւն չունի թէ, որ լեռադիական, իմպերիալիստ խմբակցութեան է ծառայում, մենք հաւատացած ենք, որ այդ խմբակցութիւնները. —որոնք գոյութիւն ունեն Անգլիայում և նամանաւանդ Ամերիկայում,— կարիք ունեն Եւրոպայի և ուրիշ տեղերի ֆաշիստական պահեստին, որպէսզի Միջազգային խաղաղութիւնն ու ապահովութիւնը խանգարեն և ճնշում գործ դնեն անգլիական և ամերիկեան քաղաքականութեան վրայ։ Այլապէս, ինչպէս կարելի է բացատրել Անգլո—Սաքսոն երկրների դիրքը, սպանական հարցում, կամ թէ՝ ի՞նչ բացատրութիւն պիտի տալ, նման օտար խնդիրների շուրջ, որոնք ոչ մի կերպ չեն համապատասխանում Խաղաղութեան ամրապնդման և Միջազգային ապահովութեան հետ։

Հակառակ լեռադիական խմբակցութեան, Ժողովուրդները, բոլոր ժամանակներից աւելի, այսօր հնարքրքրուած են մի տեսակ Խաղաղութեան գոյութեամբ։ Այս խնդիրը, ժողովուրդների համար, կեանքի ու մահու հարց է։ Ամենքն ինչու, Ղրիմի դեկլարացիայում, տեսակ և ուժեղ խաղաղութիւնը համարեց մարդկութեան ամենարժէքաւոր բաղձանքը։ Այս նոյն բաղձանքին հասնելու համար է, որ ստեղծուեց Այս նոյն բաղձանքին հասնելու կազմակերպութիւն՝ ՄԱԿ—ը, Միջազգային ապահովութեան կազմակերպութիւն են մասնակցում։ որին ազատագրուած ազգերը մեծ յոյսերով են մասնակցում։

ՄԱԿ-ի կազմելուց անմիջապէս յետոյ, զանազան խմբակցութիւնների լեռադիմականներ, սկսել են մասնակցել կամ բակցութիւնների լեռադիմականներ, սկսել են մասնակցել կամ ուրիշ միջոցներով նրան արժէքազրկել։ Այդ լեռադիմականներից մասնաւորապէս նրան ոչնչացնել և իջեցնել հասնելու ազգերի Ընկերութեան անփառունակ ասպարէզին, դուրս գալ։

«ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ»-Ի

(Շար. Ա. էջից)

կավարած լինեն։ Նրանք պատճառներ են փնտռում, թէկուզ ձևական կերպով, թալլ չտալու հուսալական կերպով, գործերին ընթացք տալու, որի դ կավարութիւնը, ըստ կանոնադրութեան, վստահուած է հինգ մեծ Պետութիւններին և նրանց մշտական անդամներն են Խաղաղութեան Խորհրդաժողովի հաւասար իրաւունքներով։ Իսկ նրանք ուզում են այդ գերկավարութիւնից զրկել Սովետական Միութեան։ Ճնշագիմական շրջանակներ, շատ լաւ են հասկանում, որ Միջազգային կազմակերպութիւն։ Որքան ժամանակ, որ Սովետական Միութիւնը վարկ ունի այդ կազմակերպութեան մէջ չի կարող ծառայել, որպէս իմպերիալիստական քաղաքականութեան մի գործիք։ Որպէսզի վստահութիւն կայացի որ ՄԱԿ-ը, իր որոշումներով չի դաւաճանելու Խաղաղութեան, որի նպատակները ամփոփած են իր կանոնադրութեան մէջ, անհրաժեշտ է, որ ՍՍՌՄ-ն իր ամբողջ իրաւասութիւնները գործադրի այդ կազմակերպութեան մէջ։

Խօսքով, յետադիմականներն էլ, յայտարարում են—որ կողմնակից են Խաղաղութեան և պաշտպանն են, որոշ սեսակի ժողովրդավարութեան, որովհետև ֆաշիստների գործած աւերները դեռ ևս չափազանց թարմ են եւրոպական հողամասի վրայ, և նրանք չեն կարող բացարձակ կերպով յայտարարել, որ կողմնակից են ուժի քաղաքականութեան, որն արդէն զզուելի է դարձել բոլոր ժողովուրդներին։ Նոյնիսկ, ծայրահեղ յետադիմականները, որոնք բղում են «մի նոր անխուսափելի պատերազմի»—ասին, այսպէս ասած, օտար ազգերին իրենց կողմը գրաւելու համար, ցոյց են տալիս, որ խուսափում են պատերազմից։ Էապէս այդ պարտադրած խաբեբայութիւնը, նրանց քաղաքականութեան թալլ կէտն է, որովհետև այդտեղից կարելի է միշտ նրանց դիմակները պատռել և քաղաքական շրջանակներում չեզոքացնել ու զինաթափ անել։

Ոչ մի ճշմարիտ ժողովրդական կազմակերպութիւն և աւելի քան բանւորական կազմակերպութիւնները չեն կարող չեզոք մնալ, ներկայի այս խաղաղութեան պայքարի խնդրում։ Այդ կէտը շատ ճիշտ է ըմբռնել Համաշխարհային Սէնդիկատների Ֆեդերացիան։ Մայիս 1-ի առթիւ հրատարակուած մանիֆէստի մէջ, որը հասցէագրուած աշխարհի բանւորութեան, օրւայ բնաբաները հետևեալներն են.—Ժողովուրդների ազատութեան յաղթանակ, ժողովրդավարութեան վերջնական յաղթանակ, ֆաշիստական և լեռատիմական կազմակերպութիւնների ջախջախում, Գերմանիայի ամբողջական զօսատգրումը Նացիզմից և ՄԱԿ-ի խաղաղութեան ճշմարիտ ու ամուր գործօն մի մարմին դառնալը։ Պիտի վստահ լինել, որ բանւորական կազմակերպութեան այդ կոչը, մեծ արձագանք կը գտնի բոլոր երկրների լայնածաւալ մասսաների մէջ։

Տեւական խաղաղութիւն ստեղծելու պայքարի ասպարէզում, բոլոր երկրների ժողովուրդների հոծ մասսաները, որոնք շահագրգռուած են ազատութեամբ, քայլում են ձեռք-ձեռքի տուած ՍՍՌՄ-ի ժողովուրդների հետ։ Այս մասսաները պատերազմի ընթացքում մեծ փորձառութիւն են ձեռք բերել քաղաքական կեանքում։ Այսօր շատ հեշտ չէ, որ հակասովետական ժամանակներով այդ մասսաներին շեղեն իրենց ճանապարհից։ Այդ օտար երկրների ժողովուրդները, մեզ աւելի լաւ են ճանաչում, քան պատերազմից առաջ։ Նրանք տեսել են, ՍՍՌՄ-ին գործի ասպարիզում, որը ընդհանուրի դատի պաշտպանութեան համար, ազատեց ժողովուրդներին, ֆաշիզմի բարբարոսութիւնից։ Օտար երկրների հայրենասէրները իրենց հայրենիքը պաշտպանելու համար, օրինակ էին վերցնում սովետական ժողովուրդներից։ Երբէք զարմանալի չէ, որ նրանցից շատերը, իրենց հայեացքները լաւել են մեզ, որպէսզի տնանեն, թէ ինչպէս կարելի է առանց տագնապի և առանց մարդը մարդու շահագործելու՝ իրականացնել վերակառուցման ծրագիրները, նոր տնտեսական և մտաւոր ուժերի զարգացման թափով և ինչպէս է հնարաւոր, պաշտպանել կանոնաւոր կերպով լաւ շահագործութեան, ժողովրդավարութեան և ընդհանուր խաղաղութեան դատը։

Սովետական մեծ երկիրը պատւարն է ժողովուրդների խաղաղութեան և ապահովութեան։ Սովետական երկրները վստահ են իրենց ուժի վրայ, բայց նրանք խուսափում են ուժի քաղաքականութիւնից։ Սովետ. Միութիւնը յարգում է, բոլոր միւս խաղաղասէր ազգերի իրաւունքները և ցանկանում է՝ ջերմ համագործակցութիւն բոլոր այդ երկրների հետ՝ ամբողջ աշխարհի խաղաղութիւնը պաշտպանելու համար։

Ահաւասիկ թէ ինչու, տեւական խաղաղութեան բոլոր անկեղծ բարեկամները ուրիշ երկրների, որ աշխատում են այս ուղղութեամբ՝ կարող են վստահել Սովետական երկրներին, որպէսզի աւելի քան ամրապնդած դուրս գան և շարունակեն այս ազնիւ պայքարը յետադիմական տարրերի խարդախի դէմ և աւելի վստահութեամբ նայեն ապագային, ուր մարդկային ամենամեծ բարձանքների իրականացումը տեղի պիտի ունենայ և համաշխարհային խաղաղութիւնը անպարտելիօրէն պիտի գործադրուի։

ԵՐԺՇՏԱՒԹԻՒՆ

(Շար. Ա. էջից)

տանի շրջանում շրջաններում բացուեցին Հայ Ֆիլհարմոնիայի բաժանմունքներ, որոնք նպաստում են երաժշտական կուլտուրայի առաւել մասսայականացմանը։

1927 թուից գործում է նաև հայ երաժշտական հրատարակչութիւնը, որը մինչև այժմ հրատարակել է հայ կլասիկ, ինչպէս նաև ժամանակակից երաժշտութեան՝ Կոմիտասի, Ռ. Մելիքեանի, Նիկ. Տիգրանեանի, Ս. Խաչիկեանի և ուրիշների երկերը։

1945 թուին Հայաստանի շրջաններում բացուած են երաժշտական դպրոցներ։ Այս դպրոցներն էլ աւելի կբարձրացնեն մեր մանուկ սերնդի երաժշտական դաստիարակութեան գործը։ Այժմ Հայաստանում գործում են 13 տարրական, միջնակարգ ու բարձրագոյն երաժշտական ուսումնական հաստատութիւններ՝ որոնցից 4 քառամեայ, 4 եօթնամեայ, 3 միջնակարգ դպրոցներ, մէկ Կոնսերվատորիա և այս տարի Սովետական Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիային կից բացուած մէկ երաժշտութեան ասպիրանտուրա։

Հայ ժողովրդի հանճարեղ զաւակը՝ Կոմիտասը, դառնութեամբ էր լցուած, որ մեր ժողովրդի հարուստ երաժշտութիւնը տեղ չունի համաշխարհային, համամարդկային կուլտուրայի մէջ։ Նա գերմարդկային՝ ջանքեր էր գործադրում, որպէսզի մեր երաժշտութիւնն էլ կուլտուրան բարձրացնի ու հասցնի եւրոպական բեմերին ու հասարակութեանը, բայց նա իւ խիզախումների մէջ միշտ էլ զառնում էր շրջապտի տգիտութեան քաւարին ու քար անտարբերութեանը։ Այսօր, իր գոյութեան 25 տարում, հայ ժողովուրդ իր վերածնած ոգու գանձերով և ստեղծագործական խիզախ և ահագնաթռիչ թռիչքով հաւասարի իրաւունքով կանգնած է մեծ ժողովուրդների շարքում։

(Վերջ) Խ. ԹՈՌՔԵԱՆ

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՋԻՆԱԴԱԴԱՐԻ ԱՌԹԻՒ

Աղեքսանդրիա, 9 Մայիս 1946

Ջինադադարի Առաջին տարեդարձին առթիւ
ՀԵՌԱԳԻՐ ՈՒՂՂՈՒԱԾ «ՁՈՐՍ ՄԵԾԵՐՈՒՆ» ՓԱՐԻԶ

Ջինադադարի առաջին տարեդարձը տօնելու համար հաւաքուած Լիմէ Ֆրանսէի սրահին մէջ, Հայ ժողովուրդը մեզ կը հրաւիրէ, լեփ լեցուն սրահի միահամուռ և բուռն ծափահարութեանց մէջ, որ Ձեզի հաղորդենք, Ցաղթանակի այս տօնին առթիւ, իր ջերմագին շնորհաւորութիւնները, և յայտնենք, միեւնոյն ատեն, իր անսասան վստահութիւնը՝ որ պիտի պաշտպանէք ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՏԸ Ձեր Մեծերու ժողովին, որ այժմ գումարուած է Փարիզի մէջ։

Ժողովուրդ մը, որ երկու հաւասարհային պատերազմի ընթացքին, տուաւ՝ քաջաբար, իր առաւելագոյն զոհողութիւնը ի սպաս իր ազատութեան և քաղաքակրթութեան թշնամիներուն դէմ մղած պայքարին, չի կրնար լքիլ քաղաքակրթութեան պաշտպաններուն կողմէ։

Ի դիմաց ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ

Քարտուղար — Նախագահ
Հ. ԳԱԼԸՆԵԱՆ — Ս. ՇԱՀՊԱԶ

Ցարգելի Հայրենակից,
ՄԱՅՈՍ ՊԱՊԵԱՆԻՆ, ՆԱԽԱԳԱՀ
Հայկական ՍՍՌ-ի ԺՈՂԿՈՄՍՈՎԵՏԻՆ
Երեւան

Ցարգելի Նախագահ

Ցաղթանակի Առաջին տարեդարձը տօնելու պահուն, Աղեքսանդրիոյ Հայ գաղութը մեզ կը հրաւիրէ, լեփ-լեցուն սրահի միահամուռ և բուռն ծափահարութեանց մէջ, որ Ձեզի և մեր Հայրենակիցները շնորհաւորենք, Ցաղթանակի այս տօնին առթիւ Ցաղթանակ, որուն մէջ մեր Մայր Հայրենիքը իր բաժինը ունեցաւ և որուն համար մենք արդարացիօրէն հպարտենք։

Հանիսականները, միևնոյն ատեն յայտնեցին իրենց հաստատ յոյսը որ մօտ ատենէն իրենց համար կարել պիտի ըլլայ Մայր Հայրենիք ներգաղթել, հոն լծուելու հարաւ հայրենասիրական աշխատանքի։

Ի դիմաց ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ

Քարտուղար — Նախագահ
Հ. ԳԱԼԸՆԵԱՆ — Ս. ՇԱՀՊԱԶ
9 Մայիս 1946

ՀԱՅՐԻԿԻՍ

Իր անւանակոչութեան առթիւ
Գրեց՝ ՄՈՒՇԵՂ ՍԱՐՎԱՐԵԱՆ

Տարիները զեփիւռի պէս, գալիս անցնում
Թաւալւում են պղտոր ալիք դեռեբը մեծ.
Փոթորիկները շատ ես տեսել է՝ աշխարհում
Կեանքի հոգսը ձիւն է մաղել մազերիդ մէջ։

Դու սիրտոտ անհոգ, ուրախ, սիրուն կեանքի
Քո արիւնը քամել ես մեր կեանքի համար
Ուրախ հոգիդ աշնոտելով թափից կեանքի
Վարդ ես քաղել, հիւթ ես բերել դու մեզ համար։

Բազուկներդ չահելութեան գինով զինած
Տեսել եմ քեզ առոյգ, զւարդ ու ժպտադէմ,
Տեսել եմ քեզ, անվախ հոգով կուի ելած,
Կուի ելած, մեր դէմ եղած կարիքի դէմ։

Տեսել եմ քեզ կորաքամակ ու տխրադէմ
Շաղաքների բանտի գունից ներս մտնելիս,
Անհուն ցաւը սեղմած ժպտուն շրթունքներիդ
Տեսել եմ քեզ, բալիդ համար հաց բերելիս։

Քո աչքերում արտասուքի ջինջ ու մաքուր
Բանտի ժանգոտ ձողի միջից կաթիլ տեսայ.
Այդ կաթիլը սնդիկի պէս գլորուելով
Քար է դառել, քնկել է իմ սրտի վրայ։

Այդ կաթիլը երդում շինած ես ինձ համար
Քեզ պէս անվախ դուրս եմ եկել ահեղ մարտի
Իմ, բո, նրա զաւակների կեանքի համար
Ես երդւել եմ դուռը փշրել ժանգոտ բանտի։

Թեհրան, 6—1—45

ԵՐԳ ՄԱՅԻՍԵԱՆ

Հայրենիքիս երջանկաբեր
Մայիսը կերգողներին
Գրեց ԷՄԻԼ՝ ՄԻՆԱՍԵԱՆ

Մայիսն եկաւ, գաշտ ու այգի կանաչեց,
Արեւն ելաւ, հաւք ու զեփիւռ սարն ելան.
Երկիրը մեր երջանկութեան խաղ կանչեց,
Հազար աղբիւր նրա ձայնի լարն եղան։

Բախտ ու բարին համբուրեց մեզ մշտատև
Հայրենիքը սիրեց եղբայր սիրողին,
Հով ու ծաղիկ հազար—բերան, հազար—թև,
Ողջունեցին բախտ ու բարի բերողին։

Խաղաղ կեանքը զուարթ ծնեց մեր երկրի,
Հողքին պողպատ սուր—թուր կախեց գոնապան
Ով չար կամի՝ թուրը սիրտը քրքրի,
Բարեկամի գլխին լինի պտոպան։

Ազգը ուրախ ծաղիկ փնջեց սարերից,
Զէնով կանչե՛ց իր կարօտած բալերին,
Աղբիւրները երգ հոսեցին ձորերից,
Ու երգերը ոգջունեցին գալիքին։

Մայիսն եկաւ, գաշտ ու այգի կանաչեց
Արեւն ելաւ, հաւք ու զեփիւռ սարն ելան։
Մեծ դուշմանը անդունդ ընկաւ՝ ամաչեց,
Հազար սարեր խոր անդունդի քարն եղան։

Թեհրան 15—7—46 թ.

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

ՇՈՒՇԱՆԻԿ ԵՒ ԳՈՒՐԳԷՆ ԵԱՆԻԿԵԱՆՆԵՐԸ (Նիւ-Եորք) սրտի անհուն կսկիծով տեղեկացան Տիկին ՄԱՐԹԱ ԴԱՒԹԵԱՆԻ սգալի մահը և այդ առթիւ իրենց անսահման ու խոր վշտակցութիւնն են յայտնում իրենց ազնիւ բարեկամ Դր. Մ. ԴԱՒԹԵԱՆԻՆ, մաղթելով նրան այդ ծանր հարուածին առկալու քաջութիւն և ուժ։

ԼՐԱՏՈՒ

ՍԷՐԳ ՋԻԱՅԻ ՀԱՐՑԱՓՆՆՈՒԹԻՒՆԸ

Շաբաթ օր, դատական քննիչ պ. Ալի Մէր Ֆենդրսկին երբ ներս է մտել ոստիկանատան այն սենեակը, ուր որդեկափակուած էր Սէյդ Ջիան, հարցաքննութիւն անելու, Սէյդ Ջիան անմիջապէս ըմբռնելով, որ եկողը քննիչ է, սկսել է քալլել և ստիճանաբար ձայնը բարձրացնելով բացականչել «Ինձնից ի՞նչ էք ուզում .. Ինձնից ի՞նչ էք ուզում..»

«Իրանը Ս՝ա»

ՆԱՖԹԱՅԻՆ ԲԱՆԻՈՐՆԵՐԻ ԳՈՐԾԱԴՈՒԼԸ

Նախ անցեալ օր Իրանա—Անգլիական Նաֆթի ընկերութիւնը Աբադանից թեհրան փոխադրուած մթերանոցի երկու պաշտօնեաների կարգադրել է կրկին Աբադան վերադառնալ, սակայն վերջիններս մերժել են, որի հետևանքով երկուսին էլ ազատ են արձակել։

Այս կարգադրութեան վրայ թանքերի և խոզովակների կառուցման պաշտօնեաները գործադուլ են սկսել։ Վարչութիւնը հինգ հոգի էլ նրանցից է ազատ արձակել։

Այս բոլորի հետևանքով 1500 բանւորներ գործադուլ են սկսել և պահանջում են կրկին իրենց ընկերների գործի անցնելը։

ԱՂԱՋԱՐԻՒ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ

Հաւաշխարհային Սինտիկատների Մթութեան կողմից պատասխանելով Աղաջարիի դէպքերի ու գործադուլի առթիւ տեղիցս տրուած հեռագրին, Սինտիկատների Մթութեան վարիչ պ. Ռըզա Թուլատայից խնդրել են դէպքերի ամբողջական մանրամասնութիւնը Լուի Սայանի ստորագրութեամբ առաքած մի հեռագրով։

ՎԵՐԱԴԱՐՁ

Կրթական նախարար պ. Բահարը, որ խորդաշ 1—ին մեկնել էր Մազանդարանի կրթական հաստատութիւններին վերահսկութիւն տալու, վերադարձաւ Թէհրան։

ՍԱՐՀԱՆԳՆԵՐ ԶԱՆԳԱՆԷՋԻ ԵՒ ՆԱԻԻԲԱԽԵՒ ԺԱՄԱՆՈՒՄՔ

Թաւրիզում բանտարկուած սարհանգներ՝ Զանգանէն և Նաւրբաքչը հսկողութեան ներքոյ ժամանեցին Թեհրան և այժմ ըստանների ակուսքում պահուած են։

ՇԱՐԺԱԿԱՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Հաւաշան գունդը անգլիական 5—րդ բանակը մեկնելիս մի ամբուլատորիա է նուիրել առողջապահական հիմնարկին։ Այսօր այդ ամբուլատորիան դուրս է բերուել ժամանակից և այսուհետև գործելու է ըստ կարիքի։

ՌԵՍԻՏԱԼ

(Շար. Ա. էջից)

Ծափահարութիւնները խազաղերին այդ երկիւղը և ես շնորհակալ եմ արուեստագէտից, որ առիթ տուեց ինձ լսելու Շուշանիկ Սալ Մինէօրով Սոնատի առաջին մասը։ Ես մի բան եմ ափսոսում միայն, որ գործը ամբողջութեամբ չ՝ունկնդրեցի։ Շատերն ձախ ձեռքով նուագած էջիւտը ըստ արժանւոյն գնահատեց, բայց ես գերադասեցի երկրորդ էջիւտը և մանաւանդ Դրդ Շերցօն և Գագանինի—Լիստի գեղեցիկ էջիւտը։

Բախի իտալական կոնչերթոյի առաջին հնչիւններից ես ըմբռնեցի, որ մեզ ունկնդրում էինք ընտիր մի արուեստագէտ։ Նուագը տարւում էր աշխոյժ յստակութեամբ, առանց տոնակի (պեդալ), խուսանաւորների թեմաների կատարեալ հաւասարակշռութեամբ։ Այդ ծանր և գեղեցիկ կտորը անմիջապէս գրաւեց ուշադրութիւնը հասարակութեան, որը լը հիասթափեց յետագային Մոցարդի փոփոխականով՝ «Դիւփորի մի մընիւէտի վրայ» և ոչ էլ Բեթհովենի 33 փոփոխականները։ Ես շատ եմ գնահատել Մոցարդի նուագի նրբութիւնը, Բեթհովենի որոշ փոփոխականների բեկորը և վստահութիւնը կամ խորութիւնը 6—րդը, 8—րդը, 16—րդը։ Ես կանգ եմ առնում, այլապէս պէտք է չատթիւել։

Ես արդէն ասացի այն բոլոր գնահատանքը, որ ունէի Խաչատրեանի «Գարի» վերաբերմամբ։ Ֆրանսական այժմէական դպրոցի ամենանշանաւոր վարպետներից Ֆրանսիս Պուլանքի «Իտալական քառրիսի» ոգանէլի կտորը, շատ դասական ընթացքով, ամուր կառուցածքով, ֆանթէզիստ երաժշտութեան և քաղցրանուագ շէրերով համեմուած հնարաւորութիւն ունեցաւ Ալիս Մարգսեանին արժէքաւորել իր լաւագոյն յատկութիւնները։

Ցոյս ունեմ, որ առաջիկայ աշնան երբ, տասարդ արուեստագետուհին մեզ կը տայ նոյն բարձր որակով այլ համերգներ և ես վստահ եմ որ կը չափի իրեն արժանի կատարեալ յաջողութիւն։

ԱԶԱՏ ՈՒՆԿՆԴԻՐ

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ

ՂԱՐՍ ԵՒ ԸՐՑԱՔԵՆ

Նիւ-Եորք—Տասս

Բազում ամերիկեան անձինք շաբունակում են նեցուկ կգնել «Ամերիկայի Հայ Ազգային Խորհրդին» և «Հայերի իրաւունքները պաշտպանող Ամերիկեան Կոմիտէին» Սովետական Հայաստանին վերադարձնելու համար Ղարսը և Արտահանը։

Քալիֆորնիայից ծերակուտական, գեսոկրատ Դովնին վերջերս մի պատգամ է առաքել Հայկական Խորհրդին յոյս յայտնելով, որ «իր աշխատանքները յաջողութեամբ կը պսակուեն ամերիկեան հանրային կարծիքի մէջ զարգացնելու հայ ժողովրդի ազատութեան համար մղած պատմական պայքարը»։

Մի այլ անդամ Կոնգրեսի՝ դարձեալ Քալիֆորնիայից և հանրապետական՝ պ. Ժիրհարթը նման մի յայտարարութիւն է արել և պնդել է այն իրողութեան վրայ, որ բոլոր հայ հողամասերի իմի հանախմբելը միակ լուծումն է, որ կարելի է տալ հայկական խնդրին։ Ժիրհարդը յայտարարել է, որ ինք նպատակ ունի մի կոչ ուղղել Նախագահ Թրումանին, որպէսզի այդ սկզբունքը տեղ գրաւէ ամերիկեան միջազգային քաղաքականութեան գլխաւոր խնդիրների շարքին։

ՌՈՒՄԱՆԻԱ

Ընտրական օրէնքի ծրագրի հրատարակութիւնը մամուլի մէջ առաջացրել է խոր բաւականութիւն ազգանական քաղաքական շրջանակներում։ Բոլոր թերթերն այդ մասին են խօսում և շեշտում են, որ դա մի մեծ քայլ է Ռումանիոյ դեմոկրատականացման։

— Ռումանիոյ նախկին պրո—նացի տիկնատար Մարաջախ Իոն Անդոնեսկուն իր երեք սատրադասակների հետ մահապատժի արժանացաւ։

Ի ԳԱՏԻ ՄԱՐՍԱՂԱԽՏ ՏԻՏՈՅԻ

Մոսկուա—Տասս

Երէկ ի պատիւ Մարաջախտ Տիտոյի, որը այժմ այցի է եկել Մոսկուա, մի ընդունելութիւն արուեց ուր ներկայ էին Իւգոսլաւ կառավարութեան ամբողջ պատգամաւորութիւնը, Իւգոսլաւիոյ, Լեհաստանի, Բուլգարիոյ Մոսկուայի դեսպանները, Զէխոսլովաքիոյ խորհրդականը, ՍՍՌՄ-ի կրթական նախարարը և շատ ուրիշներ։

Կոմիտէի նախագահը ողջունեց մարաջախտ Տիտոյի գալուստը, իսկ վերջինս իր երախտագիտութիւնն յայտնեց ի պատիւ Իւգոսլաւ պատգամաւորութեան և իրեն անձնապէս ցոյց տուած օրագին ընդունելութեան առթիւ։ Ապա տուեց մի մեծ համերգ ի պատիւ հիւրերին։

ԻՍՊԱՆԻԱ

Իւգոսլաւիայում 12 Մայիսից մինչև 19—ը կոչուեց «ճանապարհների վերակառուցման և վերանորոգման շաբաթ»։ Այս շաբաթուայ ընթացքում ժողովուրդը կամովին տրամադրեց մի միլիոն 122 հազար օրւայ աշխատանքի եկամուտ ճանապարհների վերակառուցման և վերանորոգման համար։ Այդ կամաւոր աշխատանքի ընդհանուր գումարը ներկայացնում է 257 միլիոն դինար։

ՀԱՅ ԵԿՈՒՄՐ

Կիրակի, 16 Յունիս երեկ. ժամի 8-ին

ՍԷՋՈՆԻ ՎԵՐՋԻՆ ԳԵՂԱՐԻԵՍՏԱԿԱՆ ՄԵԾ

ՀԱՄԵՐԳԸ

Ղեկավարութեամբ Գեղանչիտ՝ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՌՈՒՍՏԱՄԵԱՆԻ

Ծրագրում.—Պարկերէն, Ազգբայլաներէն, Հայերէն, Վրացերէն ժողովրդական և դասական՝

Երաժշտութիւն—երգ եւ պարեր։

Ծանօթ.—Սոլիստների և օրգեստրի մանրամասնութիւնները կարդացէք Աֆիշներում։ Տոմսերը կարելի է գնել ամեն օր Հայ Եկումբից։